«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 27. Կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների քայքայման սպառնալիքները, ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ուղղված համապատասխան միջոցառումների սահմանումը և բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները և բնակչության գույքը վարարումների, սելավների և սողանքների ռիսկից պաշտպանելու ծրագրերը

1. Կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների քայքայման սպառնալիքների և ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ուղղված համապատասխան միջոցառումները սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության բնապահպանության~~ շրջակա միջավայրի ոլորտի պետական լիազոր մարմինը:

2. Միջոցառումների մշակման ընթացքում ապահովվում են՝

1) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների գնահատումը, գույքագրումը և քարտեզագրումը.

2) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների վրա ազդեցության գնահատումը.

3) շրջակա միջավայրի վրա գերխոնավ տարածքների ազդեցության գնահատումը.

4) ոլորտի պատասխանատու մարմինների միջև տվյալների փոխանակման և համագործակցության ապահովման մեխանիզմների մշակումը և իրականացումը.

5) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների էկոհամակարգերի պահպանությանն ուղղված միջոցառումների մշակումը և այլն:

3. Բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները և բնակչության գույքը վարարումների, սելավների և սողանքների ռիսկից պաշտպանելու ծրագրերը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և որպես Զրի ազգային ծրագրի թարմացում՝ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան: